



## **Մտավոր հաշմանդամություն ունեցող տնվորներ՝ Բնակարանային պայմանների հիմնավորված հարմարեցումների իրավունք**

### **1. Որո՞նք են բնակարանային պայմանների «հիմնավորված հարմարեցումները»:**

Կալիֆոռնիայի նահանգային և դաշնային օրենքերը պահանջում են<sup>1</sup>, որ տան տերերը<sup>2</sup> «հիմնավորված հարմարեցումներ» և «հիմնավորված

<sup>1</sup> Տե՛ս Բնակարանների վերաբերյալ ձևափոխությունների ակտը, 1998 թ., 42U.S.C. §§3601 և շարունակ, և Կալիֆոռնիայի Չբաղվածության և բնակարանների վերաբերյալ ակտը, Կառավարության ծածկագիր §12900 և շարունակ, Ունրուհի ակտը, Քաղաքացիական օրենսգրքի §§51 և շարունակ: Այս օրենքների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս DRC-ի այս Տեղեկատվական թերթիկները՝ *Կալիֆոռնիայի մտավոր հաշմանդամություն ունեցող տնվորների բնակարանային իրավունքները; Ինչպե՞ս վիճարկել անկարողության վրահիմնված խտրականությունը բնակարանների հարցում:*

<sup>2</sup> Հիմնավորված հարմարեցումներ և ձևափոխությունները տրամադրելու պարտավորությունը վերաբերում է մասնավոր տան տերերին, ինչպես նաև պետական բնակարաններ տրամադրողներին, բացառությամբ այն տան տերերին, որոնք ունեն մեկ ընտանիքի համար նախատեսված տուն և միայն մեկ սենյակ են վարձով տալիս տնվորին:

ձևափոխություններ» տրամադրեն հաշմանդամություն ունեցող տնվորներին: Սանրանց տալիս է հավասար հնարավորություն, ինչ մյուս տնվորներին՝ օգտագործել և տնօրինել բնակարանային միավորը կամ ընդհանուր տարածքը: Հիմնավորված հարմարեցումը տան տիրոջ կանոնների, քաղաքականության կամ մեթոդների փոփոխություն է կամ բնակարանային ծառայությունների տրամադրման եղանակի փոփոխություն: Այս տեղեկատվական թերթիկը քննարկում է այն հիմնավորված հարմարեցումների տեսակները, որոնք դուք՝ որպես մտավոր հաշմանդամություն ունեցող տնվոր կարող եք ստանալ ձեր տան տիրոջից, նաև այն, թե ինչպես պահանջել հարմարեցումը և ինչ է պատահելու ձեր կողմից պահանջը ներկայացնելու հետո:

*Ի տարբերություն հիմնավորված հարմարեցման, հիմնավորված ձևափոխությունը ֆիզիկական փոփոխություն է բնակարանում կամ ընդհանուր տարածքում, որն անհրաժեշտ է նրա համար, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձը օգտագործի կամ վայելի բնակարանը: Օրինակ՝ դաներառում է նկարներ կամ գունային կոդերով նշաններ կամ արահետներ տեղադրելը, եթե անկարողության պատճառով դուք չեք կարող օգտագործել գրավոր նշաններ: Բնակարանային պայմանների հիմնավորված ձևափոխությունների մասին տեղեկությունների համար տես DRG-ի Տեղեկատվական թերթիկը, Հոգեկան առողջության անկարողություն ունեցող տնվորները: Բնակարանային պայմանների հիմնավորված ձևափոխությունների իրավունք*

## 2. Ի՞նչ տեսակի հիմնավորված հարմարեցումներ կարող եմ ստանալ իմ տան տիրոջից:

Ձեր տան տերը պետք է ձևափոխի իր կանոնները, քաղաքականությունը կամ մեթոդները՝ որպես հիմնավորված հարմարեցում, եթե պահանջը իրականացնելի է, գործնական և անհրաժեշտ ձեր հաշմանդամության պատճառով: Այնուամենայնիվ, տան տերը պարտավոր չէ հարմարեցում տրամադրել, եթե այն ոչ պատշաճ ֆինանսական բեռ կամ տան տիրոջ կողմից տրամադրվող բնակարանային ծառայությունների բնույթի հիմնավոր փոփոխություն է պարտադրում: Տան տերերը պետք է հիմնավորված հարմարեցումներ տրամադրեն իրենց հաշվին:

Ահա որոշ օրինակներ այն հիմնավորված հարմարեցումների, որոնք տան տերը կարող է տրամադրել ձեզ՝ որպես մտավոր հաշմանդամություն ունեցող տնվորի կամ հնարավոր տնվորի:

1. Թույլ տալ ապրել ձեզ համեմատաբար հանգիստ բնակարանային տարածքում, քան ի որ աղմուկը բացասական է ազդում ձեր առողջության վրա,
2. Ընդունել տեղեկանք գործատուից կամ սոցիալական աշխատողից՝ դիմելու գործընթացի ժամանակ, եթե դուք վերջերս բնակարան չեք վարձել հոգեբուժարանում գտնվելու պատճառով,
3. Օգնել ձեզ լրացնել վարձակալության համար դիմումը, կամ
4. Հրաժարվել ընտանի կենդանիների պահելը արգելող կանոնից՝ թույլ տալու ձեզ ձեր տանը պահել էմոցիոնալ աջակցության կենդանի: Այս հարմարեցման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տեսեք DRC-ի Տեղեկատվական թերթիկը, *Կալիֆորնիայի նախնական հաշմանդամության նուսենցող տնվորներ. Ծառայողական և ուղեկից կենդանիներ, որպես բացառություն ներքին բնակարանում ընտանի կենդանիներ պահելը արգելող կանոնից:*

### 3. Ինչպե՞ս պահանջել հիմնավորված հարմարեցում:

Հիմնավորված հարմարեցում ստանալու համար, դուք այն պետք է պահանջեք: Եթե հնարավոր է պահանջը պետք է լինի գրավոր, և նրանում դուք պետք է խնդրեք, որ տան տերը ձեզ պատասխանի մինչև կոնկրետ ամսաթիվ: Պահանջում դուք պետք է.

1. Ներկայացնեք այն փաստը, որ դուք հաշմանդամություն ունեք,
5. Ներկայացնեք ձեր կողմից պահանջվող հարմարեցումը, և
6. Նկարագրեք, թե ինչպես է հաշմանդամությունը օգնելու ձեզ ապրել բնակարանում կամ դիմել դրա համար:

Եթե դուք ներկայացնում եք հիմնավորված հարմարեցման պահանջ, տան տերն իրավունք ունի խնդրել ձեզ անից ապացույց առայն, որ դուք հաշմանդամություն ունեք: Ձեզ անից չի պահանջվում տան տիրոջը տալ ձեր կոնկրետ ախտորոշումը կամ ներկայացնել ձեր ամբողջ հիվանդության պատմությունը: Դուք միայն պետք է ներկայացնեք նամակ բժշկից կամ այլ ծառայություն տրամադրողից, որ տեղ ասվում է, որ դուք հաշմանդամություն ունեք և այն հարմարեցումը, որ պահանջում եք անհրաժեշտ է ձեր կողմից բնակարանը օգտագործելու կամ այն վայելելու համար:

## 7. Ե՞րբ կարող եմ ներկայացնել հիմնավորված հարմարեցման պահանջ :

Դուք կարող եք ձեր տան տիրոջից հիմնավորված հարմարեցում պահանջել ցանկացած պահի՝ սկսած այն ժամանակվանից, երբ դիմել եք բնակարանի համար, մինչև ձեր դուրս գալը բնակարանից: Նույնիսկ եթե տան տերը ձեր դեմ սկսել է վտարման վարույթ, դուք այնուամենայնիվ կարող եք հիմնավորված հարմարեցումներ պահանջել, որոնք թույլ կտան ձեզ ապրել բնակարանում:

## 8. Ի՞նչ է պատահում այն բանից հետո, երբ ես ներկայացնում եմ պահանջը :

Ձեր կողմից հիմնավորված հարմարեցման պահանջ և օժանդակ փաստաթղթեր ներկայացնելուց հետո տան տերը պարտավոր է դիտարկել պահանջը: Տան տերը պետք է ձեզ տեղեկացնի, արդյոք նա հարցեր ունի կամ նրան օգնողներ են պետք: Դուք պետք է պահպանեք ձեր պահանջի պատճենները, օժանդակ նամակ (ները), տան տիրոջ պատասխանը և ձեր պահանջի վերաբերյալ այլ փաստաթղթեր:

Եթե տան տերը կարծում է, որ հիմնավորված հարմարեցման ձեր պահանջը անհիմն է, նա պետք է բացատրի, թե ինչու և առաջարկի այլ ընտրանք: Տան տերը պետք է շարունակի այս բանակցությունը մինչև դուք համաձայնություն գտնուեք որոշակի հարմարեցման վերաբերյալ կամ մինչև պարզ լինի, որ դուք չեք կարող գալ համաձայնության:

Եթե հարմարեցման վերաբերյալ ձեր պահանջին տան տիրոջ պատասխանը ձեզ չի բավարարում, գոյություն ունենալու նրա որոշումը վիճարկելու բազում եղանակներ: Սրանք ներառում են միջնորդությունը, վարչական բողոքները և դատավեճը: Լրացուցիչ տեղեկություններ համար տեսեք **DRC**-ի Տեղեկատվական թերթիկը՝ *Ինչ պե՞ս վիճարկել հաշմանդամության վրա հիմնված խտրականությանը բնակարանների հարցում*:

## 9. Ինչ պե՞ս ես ավելի նկարող եմ իմանալ :

Եթե հարցեր ունեք հաշմանդամության ունեցող մարդկանց բնակարանների հետ կապված խտրականությանից պաշտպանող նահանգային և դաշնային օրենքների, ձեր իրավունքների կամ պարտավորությունների վերաբերյալ, կապվեք Disability Rights California-ի հետ:

+3 Ե.՝ 800-776-5746

Տեքստային մոնիտորինգի հեռախոս՝ 800-649-0154

[www.disabilityrightsca.org](http://www.disabilityrightsca.org)

Մենք ցանկանում ենք լսել ձեր արձագանքը: Այս տեղեկատվական թերթիկը կարդալուց հետո խնդրում ենք պատասխանել այս կարճ հարցաթերթին և մեզ հայտնել ձեր կարծիքը:

Անգլերեն տարբերակ՝ <http://fs12.formsite.com/disabilityrightsca/form54/index.html>

Իսպաներեն տարբերակ՝ <http://fs12.formsite.com/disabilityrightsca/form55/index.html>

*Խտրականության վերացման նպատակով պիտակավորման, խտրականության, նվազեցման և կատարելագործման քաղաքականության ծրագիրը  
Ֆինանսավորվում է ընտրողների կողմից հաստատված Հոգեկան առողջության  
ծառայության ներքին ակտիվ (Նախ. 63) և կառավարվում է Կալիֆոռնիայի  
հոգեկան առողջության ծառայության ներքին մարմնի կողմից (CalMHSA): County  
MHSA-ն ֆինանսավորում է CalMHSA-ի աջակցությանը, որը անհատների,  
ընտանիքների և համայնքների համար հոգեկան առողջության հետևյալ  
արդյունքները բարելավելու համար աշխատող շրջանների  
կառավարության ներքին կազմակերպության է: CalMHSA-ը տրամադրում է  
ծառայության ներքին և իրականացնում է ուսումնական ծրագրեր նահանգի,  
տարածաշրջանային և տեղական մակարդակներով: Լրացուցիչ  
տեղեկություններ ստանալու համար այցելեք <http://www.calmhsa.org> կայքը:*

